* * *

Ինչ ես կատաղել անմեղ արարքից,
Միամիտ ամբոխ, ես ինչ արեցի.
Ուզում ես անհետ քշել աշխարքից,
Որ ես իմ պարտքը միայն կատարեցի։

Արժանավորի առաջ խոնարհած
Ես պատարագ եմ մատուցանում,
Եվ չար նախանձից ահա կուրացած
Դուն ինձ քարկոծել ես ցանկանում։

Հապա քո աստվածը որտեղ է բնակվում,
Այնտեղ արդյոք, ուր դուն էլ չըգիտես,
Նա՞ է որ միայն սարսափ է զարկում,
Այդպիսի աստված ո՞վ քարոզեց քեզ։

Միամիտ ամբոխ, մոլորված ես դուն,
Ես անգիտությամբ կուռք չըպաշտեցի.
Ես այն մարդու մեջ տեսա Աստըծուն,
Ահա թե ինչու երկրպագեցի։